ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆ
(Ջոն Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ լայն ճանաչման արժանացած վաստակաշատ պատմաբան, հրապարակախոս, կուսակցական, պետական գործիչ Ջոն Սահակի Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակը:

Ջ. Կիրակոսյանը ծնվել է 1929 թ. մայիսի 6-ին Երևան քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո անմիջապես ընդունվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1951 թ.: Նրա ասպիրանտական ուսումնառությունն անցել է Մոսկվայում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում, ուր մասնագիտացել է արևելյան երկրների նոր պատմության բնագավառում: Նույն ինստիտուտում՝ 1954 թ., հաջողությամբ պաշտպանել է 1918–1921 թթ. Իրանում անգլիական ինտերվենցիայի մասին թեկնածուական ատենախոսությունը:

Երիտասարդ մասնագետը վերադառնում է հայրենիք և, ամենևին չանտեսելով գիտական իր պատրաստությունն ու անելիքները, մի շարք պատասխանատու կուսակցական, պետական աշխատանքներ է կատարում: 1955–1962 թթ. գլխավորում է «Լենինյան ուղիով» ամսագրի պրոպագանդայի բաժինը: Ապա չորս տարի աշխատում էր ՀԿԿ կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ: 1966–1969 թթ. նա վարում էր Հայկական ԽՍՀ մինիստրների խորհրդի հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահի, 1969–1975 թթ.՝ ՀԿԿ - կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի, իսկ կյանքի վերջին տասնամյակում՝ 1975–1985 թթ., ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնները: 1967 թվականից Կիրակոսյանը դասախոսում էր սկզբում ԵՊՀ պատմության ֆակուլտետում, իսկ մեկ տարի անց, երբ հիմնադրվեց համալսարանի արևելագիտության ֆակուլտետը, աշխատանքի անցավ այնտեղ որպես դասախոս և ապա Արևելքի երկրների պատմության ամբիոնի վարիչ:

Ջ. Կիրակոսյանի գիտական-ստեղծագործական աշխատանքները ծավալվում են 60-ական թվականներից, երբ համեմատաբար նպաստավոր պայմաններ են

ստեղծվում գաղափարախոսական ոլորտում. անհատի պաշտամունքի քննադատությամբ պայմանավորված՝ ամբողջ երկրում իշխող գաղափարական պարտադրանքներն ինչ-որ չափով թուլացան, ստեղծվեց համեմատաբար ազատ ստեղծագործելու մթնոլորտ: Շնորհիվ դրա 1960-ական թվականները դարձան հասարակական գիտությունների, հատկապես հայագիտության, հայ արվեստի ու գրականության և ամբողջ մշակույթի համար վերելքի ժամանակաշրջան:

Պատմագիտության մեջ այդ զարթոնքն արտահայտվեց մինչ այդ չխրախուսվող արգելված թեմաների, ինչպես՝ հայ ազգային-ազատագրական շարժումների, հայկական գաղութների ու սփյուռքի և այլ հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Նախաձեռնվեց հայ ժողովրդի ընդհանրացնող պատմության ութհատորյակի ստեղծումը: Ավելին, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանին հաջողվեց հրատարակել «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն և այլն, և այլն:

Կիրակոսյանը ստեղծված հնարավորություններն ամենից ավելի լիարժեք օգտագործեց, և հետագա տարիներին եղած որոշ ազատությունները սեղմվելու պայմաններում անգամ, նույն թափով և ուժգնությամբ շարունակեց Հայկական հարցի հետազոտումը: Ինչո՞վ էր դա պայմանավորված:

Ջ. Կիրակոսյանն իր սերնդակիցների մեջ առանձնանում էր ինքնատիպ խառնվածքով. ներքուստ ազատ, կաշկանդվածություն չունեցող անձնավորություն էր: Նրա մոտ չկար հայագիտության, հասարակական գիտությունների մասնագետներին համակած, ժամանակի իրավիճակով թելադրված մտավախությունը: Նրան հատուկ էին մարդու և քաղաքացու խիզախ, երբեմն էլ հանդուգն պոռթկումները: Այդ հանգամանքը և հայրենասիրությունն ու ազգային արժանապատվությունը բարձր պահելու հավատամքը պայմանավորեցին պատմագիտության մեջ գրավելու համարձակ, արդար և հետևողական դիրքորոշում: Նրա այդ հատկանիշը բնութագրելու նպատակով հիշատակեմ ինձ քաջածանոթ մի փաստ, որը շատ շատերին, թերևս, հայտնի չէ: Ականավոր պատմաբան, մարքսիստական պատմագրության գաղափարախոսներից ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1920-ական թվականներին հրատարակեց մի շարք հոդվածներ, գրքույկներ քաղաքական հակառակորդ կուսակցության՝ հայ հեղափոխական դաշնակցության դեմ: Հետագա տասնամյակներում ծանրակշիռ աշխատություններ գրեց Միքայել Նալբանդյանի, հայ ազատագրական շարժումների մասին: Կյանքի վերջին տարիներին, 1960-ականների երկրորդ կեսին ներկայացրեց մի աշխատություն, որում բացահայտվում էին դաշնակցություն կուսակցության ծագման նարոդնիկական ակունքները և ներկայացվում այդ կուսակցության իրական, գիտական պատմությունը՝ մինչև 1905–1907 թթ. ընկած հեղափոխության շրջանը: Աշխատության հրատարակության շուրջ սուր ու կրքոտ բանավեճ ծավալվեց հայ մտավորականության շրջանում, մասնավորապես ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում, որտեղ աշխատում էր հեղինակը: Հայտնի էր, որ Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը դեմ էր աշխատության հրատարակությանը, սակայն նպատակա-

հարմար էր տեսնում, որ մերժման կարծիքը հայտնի գիտական հաստատությունը՝ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը: Հարցի քննարկմանը, երկու հակադիր բևեռի բաժանված, մասնակցում էին հանրապետության մտավորականները, առաջին հերթին պատմաբանները: Ջ. Կիրակոսյանը, ինքն էլ քննադատական հոդված հրատարակած լինելով Արևելքի երկրներում դաշնակցության վարած քաղաքականության մասին, և, որ գլխավորն է, զբաղեցնելով Կենտկոմի գիտության և կրթության բաժնի վարիչի պաշտոնը, միանշանակ կանգնեց աշխատությունը հրատարակելու դիրքերում: Հիրավի, դա գիտական ճշմարտությանը սատար կանգնելու անօրինակ խիզախում էր:

Դժվար չէ հասկանալ, որ նման դեկավարը ոչ միայն հետագա առաջընթաց չէր կարող ունենալ, այլև ամենևին նպատակահարմար չէր կուսակցական դեկավար պաշտոնում նրան պահելը: Շատ չանցած՝ Ջ. Կիրակոսյանը խնամքով մեկուսացվեց իր զբաղեցրած պաշտոնից, նշանակվեց ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար: Խորհրդային տարիներին այդ հիմնարկությունը միայն անվանապես էր նախարարություն կոչվում, այստեղ անելիք չկար, ըստ էության, այն թռշակառու անձի աշխատավայր էր: Դա Կիրակոսյանի աշխատանքային գործունեության համար հետընթաց քայլ էր, սակայն հասարակական նշանակության առումով, իր գիտական գործունեության տեսակետից եղավ խիստ շահեկան: Նա հնարավորություն ստացավ ամբողջովին ու անմնացորդ նվիրվելու իր նախասիրած Հայկական հարցի պատմության հետազոտմանը:

Ազգային հիմնախնդիրներով աշխույժ զբաղվելու 60-ական թվականների ազատամտական ընդհանուր մթնոլորտում Ջ. Կիրակոսյանն անվերադարձ դիմաշրջվեց դեպի արևմտահայության պատմությունը, դեպի Հայ դատը: Եվ այդ բնագավառում իր կարճատև կյանքի հետագա երկու տասնամյակներում ոգեշունչ ու անդուլ աշխատանքով մեծ արդյունքների հասավ: Մինչ այդ, գերազանցապես ժամանակի պահանջներից ելնելով, տարբեր թեմաներով հոդվածներ, գրքույկներ էր հրատարակում: Դրանք իր գիտական հետաքրքրություններին հիմնականում անհարիր, մեծ մասամբ կուսակցական գաղափարախոսական միտումներով թելադրված հարցեր էին: Անշուշտ, այն բնավ էլ իր տարերքը չէր:

Հոբելյարի ուսումնասիրությունների պատմագիտական նոր ուղղվածությունը հատկանշվեց 1965 թ. լույս տեսած «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914–1916 թթ.)» մենագրությամբ: Այն ունեցավ երկրորդ հրատարակություն (1967 թ.) և տպագրվեց նաև ռուսերեն (1971 թ.): Մենագրությունը լույս տեսավ հայ ժողովրդի ամենաողբերգական իրադարձության՝ Մեծ եղեռնի 50-ամյակի հուժկու շարժման ժամանակ: Հարազատ ժողովրդի նկատմամբ պարտավորվածության բարձր զգացումն ու նրա տառապանքները վերապրումներով ժառանգելը, ինչպես և գենոցիդը որպես մարդկության դեմ կատարված հանցագործություն դատապարտելու միտումն է լիցք տվել հեղինակին գրելու այդ աշխատությունը: Մենագրությունը քննական-վերլուծական ուսումնասիրության բնույթ ունի: Նրանում բերված հարուստ, մի մասն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված փաստերն ու հարցադրումները հիմ-

նավոր ու մանրակրկիտ քննարկման են ենթարկվում և արվում համապատասխան հետևություններ, եզրակացություններ:

Մենագրությունը սկսվում է Առաջին աշխարհամարտին նախորդող շրջանում Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության, նրա սոցիալ-տնտեսական և ազգային ծանր գոյավիճակի նկարագրությամբ: Թվում էր, թե 1908 թ. վերնախավային հեղաշրջումով արյունոտ սուլթան Աբդուլ Համիդին տապալած և իշխանության գլուխ եկած «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վե թերաքքի») երիտթուրքերի կուսակցությունն առաջադիմական քայլ կկատարեր կայսրության մեջ դժվարին պայմաններում ապրող ժողովուրդների նկատմամբ: Սակայն հեղինակը համոզիչ փաստերով և պատմական իրադարձությունների վերլուծությամբ ցույց է տալիս, որ երիտթուրքերը ոչնչով չտարբերվեցին իրենց նախորդից, հայ ազգաբնակչության անմխիթար վիճակն անփոփոխ մնաց, եթե չասենք ավելի վատթարացավ:

Թուրքական ազգային բուրժուազիան և նրա իշխող երիտթուրքերի կուսակցությունն ամեն ինչ անում էր հայերին իրենց ճանապարհից վերացնելու ուղղությամբ, քանի որ թուրքերը չէին կարողանում դիմանալ հայերի մրցակցությանը: Թուրք իշխանավորներն ի զորու չեղան արժևորելու կայսրության քրիստոնյա բնակչության քաղաքակրթիչ դերը և նրանց միջոցով հասնել առաջադիմության: Ընդհակառակը, նրանք որդեգրեցին ոչ թուրք ժողովուրդներին մահմեդականացնելու կամ բնաջնջելու պանիսլամիստական քաղաքականությունը:

Ջ. Կիրակոսյանը բացահայտում է երիտթուրքերի պարագլուխների պանթուրքական վարդապետությունը: Նրանք գտնում էին, որ Հայաստանն ու հայերը խանգարում են թուրքերի միավորմանը: Նրանց գաղափարախոսներից դոկտոր Նազըմը նշում էր, որ իրենց նախնիները Թուրանից են եկել, և Կասպից ծովից դեպի արևելք ընկած ընդարձակ տարածքներում թուրք ցեղերն ապրում են գրեթե միատար, իսկ իրենք մնում են մեկուսացված: Հետևաբար, իրենց առաքելությունն է համարում իրականացնելու թուրք ցեղի միությունը՝ Միջերկրականից մինչև Արալի ծովը: Հասկանալի է, որ հայ ժողովուրդն էր համարվում գլխավոր խոչընդոտն այդ միավորումն իրականացնելու ճանապարհին:

Այնուհետև հեղինակն անդրադառնում է Առաջին աշխարհամարտին անմիջականորեն նախորդող քաղաքական իրադարձություններին: Վկայակոչելով թուրքական նոր իշխանավորների օրոք կատարված 1909 թ. Ադանայի կոտորածը՝ հանգամանորեն լուսաբանում է թուրքական հակահայկական նացիոնալիզմը, նրա տարաբնույթ դրսևորումները: Ապա հեղինակն անցնում է 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմում թուրքերի պարտության և Հայկական հարցի վերաբացման խնդրին: Բացահայտվում է այդ հարցի իմաստն ու նշանակությունը, հզոր տերությունների՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի դիրքորոշումը Թուրքիայի և հայերի հանդեպ:

Փաստերով ցույց է տրվում, թե ինչպես Բալկանյան պատերազմից անմիջապես հետո երիտթուրքական կառավարող շրջանները գաղտնի խորհրդակցություններում մշակում էին արևմտահայության զանգվածային տեղահանման ու բնաջնջման պլանը:

Հեղինակը լուսաբանում է այն իրողությունը, որ պատերազմի նախօրյակին և հենց բուն պատերազմի ժամանակ հայկական շրջաններում, մասնավորապես քաղաքական ուժերի կողմից թերագնահատվում էր թուրքական ռազմավատատիրական բռնապետության մահաբեր ուժը, միաժամանակ գերագնահատվում էր եվրոպական պետությունների, նրանց դիվանագիտության «հայասիրական» հավաստիացումների նշանակությունը: Մարդասիրական շլացնող բանաձևումներով հանդես եկող երիտթուրքերի օրոք՝ մանավանդ Ադանայի կոտորածներից հետո, հայ քաղաքական շրջանները՝ առաջին հերթին ազգային կուսակցություններն ի զորու չեղան իրատեսորեն նայելու իրականությանը: Նրանք չկարողացան կանխատեսել հասունացող արհավիրքը և բնակչությանը նախապատրաստել դիմակայության: Անտեսվեց այն սթափեցնող գործոնը, որ եթե խաղաղ պայմաններում հայերի զանգվածային կոտորած է կազմակերպվում, նույնը կարող է կրկնվել նաև հասունացող պատերազմում:

Գրքում կենտրոնական տեղ է գրավում արևմտահայության 1914–1916 թթ. եղեռնը: Հեղինակը վավերագրական խոսուն նյութերով ցույց է տալիս, թե ինչպիսի մոլեռանդ, գազանային կերպարանք էր ընդունել պանթուրքիզմը: Հայերի ֆիզիկական ոչնչացումը համարվում էր «սրբազան և հայրենասիրական գործ»: Երիտթուրքերն իրենց հրեշավոր ծրագրերն իրագործեցին խորամանկորեն ու բարբարոսաբար: Թուրքական իշխանությունները բանտերից ազատ արձակեցին հանցագործների ու մարդասպանների և նրանց զինելով՝ ուղարկեցին հայաշատ վայրերը: Նրանք զորակոչի ենթարկեցին ու գաղտագողի կոտորեցին մարտունակ երիտասարդությանը, հետո ձերբակալեցին ու ոչնչացրին հայ մտավորականությանը, ապա անցան կանանց, երեխաների ու ծերերի կոտորածներին: Բնակչության մյուս մասը տեղահանվեց, կոտորվեց ճանապարհներին կամ էլ ոչնչացավ Միջագետքի անապատներում, սովի ու հիվանդությունների հետևանքով:

Գրքում փաստերով ու համոզիչ կռվաններով ապացուցվում է այն ճշմարտությունը, որ հայերի բնաջնջման ծրագրերը իթթիհաթականների կողմից մշակվել է նախքան Առաջին համաշխարհային պատերազմը: Հեղինակը ցույց է տալիս, որ թուրքական կառավարության այն պաշտոնական մեկնությունը, թե հայերի տեղահանության ծրագիրն ընդունվել է 1915 թվականին՝ ռազմական նկատառումներով, ստահոդ կեղծիք է: Տարբեր աղյուրներից քաղված ու համադրված փաստերով գիտնականը կազմել է աղյուսակներ հայաբնակ վայրերից տեղահանված ու ոչնչացված հայերի թվերի մասին (էջ 351-355):

Հեղինակը ներկայացրել է հայերի կոտորածների ու տեղահանության ամբողջ ընթացքի սահմռկեցուցիչ փաստերը, որոնք ինքնին բացահայտում են թուրք ջարդարարների և միջազգային իմպերիալիզմի իրական դեմքը:

Մենագրության էական արժանիքներից է այն, որ նրանում լուսաբանված են Վանի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Մուսա լեռան ինքնապաշտպանական հերոսական մարտերը: Դրանք առանց առաջնորդի մնացած արևմտահայ զանգվածների ինքնաբուխ ու անձնազոհ խիզախումներ էին: Ազգային առումով այդ հերոսական մարտերը թուրքերին դիմակայելու բարոյական սպեղանի են:

Աշխատության վերջին՝ չորրորդ, գլուխը կրում է «Միջազգային իմպերիալիզմը թուրքական ջարդարարության մեղսակից» խորագիրը: Գիտական խորաթափանցությամբ բացահայտվում է, որ Արևելյան հարցի բուն շարժիչ ուժը Օսմանյան բռնապետության տակ ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն էր: Մեծ տերությունները հանդես էին գալիս որպես այդ ժողովուրդների ազատագրական ոգորումների հովանավորողներ, բայց իրականում այդ շարժումները շահարկում էին հօգուտ իրենց: Աշխատության մեջ անցկացվում է այն իրավացի տեսակետը, որ Արևմտյան Հայաստանի հարցում մեծ տերությունների միջև եղած հակամարտությունները թուրքական կառավարող շրջանները մշտապես խորամանկորեն օգտագործում էին Հայկական հարցը իրենց ձեռնտու եղանակով լուծելու համար: Հեղինակը բացահայտում Թուրքիայի դաշնակից Գերմանիայի բացասական դերը հայկական ջարդերում, ցույց տալիս Անգլիայի, Ֆրանսիայի և ցարական Ռուսաստանի դիվանագիտական խաղերը, Հայկական հարցի օգտագործումը Մերձավոր Արևելքում իրենց գավթողական նկրտումներն իրականացնելու համար: Ջ. Կիրակոսյանը միանգամայն տեղին մեջբերում է մեծ մարդասեր, արևմտահայ զանգվածների վիճակը բարելավելու ջատագով Ֆրիտյով Նանսենի խոսքերը. «Վայ հայերին, որ նրանք երբևիցե ներքաշվել են եվրոպական քաղաքականության մեջ: Շատ ավելի լավ կլիներ նրանց համար, եթե Հայաստանի անունը երբեք չարտասանվեր որևէ եվրոպական դիվանագետի կողմից» (էջ 399):

Սույն աշխատությամբ հեղինակը քաղաքացիական պարտքի բարձր գիտակցությամբ, ազնիվ ու կայուն հայրենասիրությամբ ամբողջ էությամբ ընդվզեց իր ժողովրդի հանդեպ կատարված բարբարոսության և այդ բարբարոսությունը քողարկողների, արդարացնողների դեմ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում և սփյուռքում հրատարակվել են ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, հոդվածներ, հիշողություններ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արևմտահայության ապրած ողբերգության առանձին հարցերի մասին: Ջ. Կիրակոսյանը տվել է այդ իրադարձությունների ամբողջական գիտական պատմությունը՝ օգտագործելով արխիվային նյութեր, հրապարակի վրա եղած գրականությունը, մամուլը, գիտական շրջանառության մեջ դնելով նոր վավերագրեր ու փաստաթղթեր: Հատկանշական է, որ Կիրակոսյանի ուսումնասիրությունը բարձր է գնահատել սույն հարցերի ճանաչված մասնագետ՝ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը. «Ջոն Կիրակոսյանի վերջերս լույս տեսած գիրքը այն սակավաթիվ աշխատություններից մեկն է, որ ունի նյութն ընդհանրացնող և հարցը բազմակողմանիորեն լուսաբանող գիտական ուսումնասիրության բնույթ»: Ապա շարունակելով իր միտքը՝ գրում է. «Արևմտահայերի մեծ եղեռնին նվիրված ներկա աշխատությունը գրված է փաստական հարուստ նյութի հիման վրա: Հեղինակը օգտագործել է արխիվա-

յին ֆոնդեր, մամուլ և պատմական գրականություն՝ հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով»[1]:

Իր հետագա ուսումնասիրություններում Ջ. Կիրակոսյանն անցնում է պատերազմի ժամանակ կատարված ողբերգական իրադարձությունների առաջացման ակունքների բացահայտմանը: 1978 և 1980 թվականներին հրատարակվեց նրա «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» երկհատոր աշխատությունը, որի մեկ հատորը 1981 թ. հրատարակվեց նաև ռուսերեն: Առաջին գիրքը նվիրված է 1870-ական թվականների Արևմտյան Հայաստանի համար էական նշանակություն ունեցող իրադարձություններին: 1877–1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը, ռուսների առաջխաղացումն ու հաղթանակը խանդավառությամբ ընդունվեցին հայ ժողովրդի կողմից: Այդ իրադարձությունները ազգային-ազատագրական պայքարի ծավալման, սեփական իրավունքները պաշտպանելու, ինքնահաստատման հարցում կարևոր նշանակություն ունեցան: «Ռուսական զենքի օգնությամբ,– իրավամբ գրում է հեղինակը,– արևմտահայությանն ազատագրելու, Արևելյան Հայաստանի հետ միավորվելու, մի միասնական տարածքի վրա համախմբվելու ձգտումը զորեղ լիցք ստացավ, թևակոխեց իր զարգացման նոր փուլը» (էջ 3):

Բնութագրելով հայ ազգային-ազատագրական շարժումը որպես Օսմանյան կայսրությունում տիրող դաժան պայմանների բնական ծնունդ և առաջադիմական երևույթ՝ Կիրակոսյանը քննադատում է թուրք պատմաբաններին շարժման ճշմարիտ բնույթն աղավաղելու, կեղծելու համար: Քննարկվում է նաև Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցի նկատմամբ Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, բիսմարկյան Գերմանիայի բռնած բացասական վերաբերմունքն ու դիրքը: Ներկայացնելով Սան Ստեֆանոյի պայմանագիրը, Բեռլինի վեհաժողովում նրա վերանայման պատմությունը՝ հեղինակը ցույց է տալիս, որ արևմտյան պետություններից յուրաքանչյուրն իր շահերից ելնելով ծառայել է Օսմանյան խարխլված կայսրության պահպանմանը, դրանով իսկ նպաստելով երկրում ապրող և ազատության ձգտող քրիստոնյա ժողովուրդների, հատկապես հայերի տառապանքների տևականացմանը:

Աշխատության արժանիքներից մեկն էլ այն է, որ բազմապիսի ու բազմաբնույթ նյութերի հիման վրա Հայկական հարցի առաջացումը քննարկվում է Ռուսաստանի, արևմտաեվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության դիվանագիտական հարաբերությունների լայն դաշտում:

Իրականությունը ճշգրիտ ու տրամաբանված ներկայացնելով՝ լուսաբանվում է Բեռլինի վեհաժողովում խոշոր տերությունների կողմից Ռուսաստանին մեկուսացնելը, Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Բեռլինի 61-ով փոխարինելը: «Երկաթե շերեփի» պատմությունը կարևոր, սթափեցնող դեր կատարեց հայկական շրջաններում: Տիրապետող դարձավ օտարի վրա հույս դնելու փոխարեն սեփական ուժերին ապավինելու մտայնությունը: Ցույց է տրվում Ռաֆֆու, Պատ-

---

[1] *Մ. Ն ե ր ս ի ս յ ա ն. Գիտական լուրջ ուսումնասիրություն.– «Լենինյան ուղիով», 1965, № 9, էջ 101, 103:*

կանյանի, Ծերենցի, Արծրունու և շատ ուրիշների նշանակալի դերը հայ հասարակական մտքի զարգացման ընթացքում: Նրանց գաղափարների իրականացնողները եղան Արաբոն, Աղբյուր Սերոբը, Անդրանիկը, Գևորգ Չաուշը և շատ ուրիշներ, որոնք կռվում ու զոհվում էին հանուն հայրենի երկրի ազատության: Սոցիալ-դասակարգային հիմքի վրա ձևավորված մարքսիստական գաղափարախոսության անվերապահ տիրապետության մթնոլորտում Ջ. Կիրակոսյանն ազատագրական շարժման շեփոր էր հնչեցնում, երիտասարդության մեջ մտքեր արթնացնում, ազգային շահերի պաշտպանության ուղի հարթում նրանց համար:

XIX դարի 80-ական թվականների անցքերին է նվիրված երկրորդ գիրքը: Հայ ժողովուրդը սպասումների մեջ էր, որ Ռուսաստանի և եվրոպական տերությունների միջամտությամբ կիրագործվի Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի պահանջը և կբարելավվի արևմտահայերի վիճակը: Այդ տասնամյակը սպասումների և մյուս կողմից աշխարհի հզորներից, բուրժուական դիվանագիտությունից հուսախաբությունների տարիներ էին: Հեղինակը ցույց է տալիս, թե արևմտահայության ազատագրման գաղափարը հասունացնելու գործում ինչպիսի վիթխարի գործունեություն ծավալեցին այս շրջանում հրապարակ ելած «Արմենիա» (Մարսել), «Հայաստան» (Լոնդոն), «Հնչակ» (Լոնդոն, Ժնև) թերթերը: 80-ական թվականների կեսերից ազգային ուժերի համախմբման, ինքնության թռիչք տեղի ունեցավ, առաջին պլան մղվեց սեփական ուժերով մարտնչելու, «սուլթանիզմին քաղաքական կռվի ձեռնոց նետելու մտայնությունը»:

Հեղինակն ըստ ամենայնի բացահայտելով հզոր տերությունների դիվանագիտության հակաժողովրդական բնույթը, միաժամանակ ցույց է տալիս Եվրոպայի դեմոկրատական շրջանների առաջադեմ գործիչների հումանիստական դիրքորոշումը:

1972-ին լույս տեսավ Ջ. Կիրակոսյանի և Ռ. Սահակյանի կազմած «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923 թթ.)» ժողովածուն: Աղբյուրագիտական հույժ կարևոր նշանակություն ունեցող ստվարածավալ ժողովածուն ընդգրկում էր Հայաստանի միջազգային իրավական և քաղաքական պատմությանն առնչվող մեկդարյա բոլոր հիմնական փաստաթղթերը՝ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից մինչև 1923 թ. Լոզանի պայմանագիրը: Գրքի ընդարձակ առաջաբանում Ջ. Կիրակոսյանը կատարել է ժողովածուի փաստաթղթերի և նյութերի գիտական քննություն:

Հեղինակն իր ուսումնասիրությունների ոլորտում ընդգրկեց նաև 1880-ական թվականներին հաջորդող պատմական փուլերը: 1982 և 1983 թթ. իրար հետևից լույս տեսան երկու գիրք խիստ ուշագրավ, դատավճռի նշանակություն ունեցող դիպուկ խորագրով՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», որը մեկ գրքով հրատարակվեց նաև ռուսերեն (1986 թ.):

Հույների և սլավոնների ազատագրումից հետո թուրքերի հարվածն ուղղվեց հայերի և նրանց ազատագրական շարժումների դեմ: Առաջին գրքում հեղինակը ցույց է տալիս, որ XIX դարի 90-ական թվականներից 1914 թ. ընկած

ժամանակահատվածում այդ քաղաքականությունը կործանարար էր ոչ միայն կայսրությանը ենթակա ժողովուրդների, այլ նաև հենց թուրք ժողովրդի համար: Թուրք ժողովուրդն իր տնտեսական, մշակութային մակարդակով ետ էր մնում կայսրությունում բնակվող գրեթե բոլոր մյուս ժողովուրդներից: Դրա հետ մեկտեղ որպես երկրում տիրապետող էթնոս՝ թուրքերը դարերով օգտվել են կառավարության և շարիաթի օրենքներով իրենց վերապահված հովանավորությունից: Այդ հանգամանքը նրանց մեջ ամրապնդել է այն համոզմունքը, որ թուրքերը և առհասարակ իսլամին հետևողները, գերակա էթնոս են մյուս ժողովուրդների նկատմամբ: Արմատավորված և ավանդական ուժ ձեռք բերած այդ համոզմունքը սկզբունք դարձնելու հետևանքով ծրագրվող բոլոր բարեփոխումները, ի վերջո, մնում էին թղթի վրա: Ահա թե ինչու Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ կատարելու խնդրին սուլթան Աբդուլ Համիդը համաձայնություն էր տալիս, գիտենալով, որ այն չի կատարվելու: Ավելին, 1890-ական թվականների կեսերին բարեփոխումներ կատարելու փոխարեն կազմակերպեց 300 հազար հայերի կոտորած:

Հեղինակը ճշմարտացիորեն բացահայտում է մեծ տերությունների փարիսեցիական վերաբերմունքը Հայկական հարցում: Այդ պետություններից յուրաքանչյուրը հետամուտ էր իր շահերին: Անգլիայի համար Թուրքիան Հնդկաստանի ճանապարհին ստրատեգիական կարևոր հենակետ էր: Գերմանիան սկսել էր մյուս տերությունների հետ մրցակցել և հասավ Բեռլին-Բաղդատ երկաթուղու կառուցման իրավունք ձեռք բերելուն: Նույն ձևով նաև մյուս հզոր պետությունները: Արևմտահայերը մեծ հույսեր էին կապում Ռուսաստանի ռազմական հաղթանակների հետ, որի արդյունքներից օգտվելուն խանգարում էին եվրոպական երկրները:

Ջ. Կիրակոսյանը համոզիչ փաստաթղթերով հիմնավորում է Արևմուտքից օգնություն սպասելու անիրական լինելը, քանի որ խոշոր տերությունները, իրենց շահերից ելնելով, մշտապես զիջումների էին գնում Թուրքիային: Վերջինս էլ հմտորեն օգտագործում էր այդ պետությունների ներքին հակասությունները՝ Հայկական հարցն իր ուզած ձևով լուծելու համար: Լուսաբանվում է նաև այն պարագան, որ հպատակ ժողովուրդների քաղաքական կազմակերպությունների աջակցությամբ են երիտթուրքերը կարողանում տապալել սուլթանին և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Սակայն իրենց նպատակին հասնելով, իշխանության գալով չեն կատարում նախկին խոստումներից և ոչ մեկը: Հեղինակն իր ուսումնասիրություններում համոզիչ փաստարկներով ցույց է տալիս, թե ինչպես քայլ առ քայլ օսմանիզմը վերափոխվեց թուրքիզմի, իսկ վերջինս էլ՝ պանիսլամիզմի:

Ուսումնասիրության երկրորդ գիրքն ընդգրկում է Մեծ եղեռնից հետո մինչև XX դարի 80-ական թվականների առաջին տարիներն ընկած իրադարձությունները. գենոցիդի քաղաքականության շարունակումը 1918 թվականին, երիտթուրքերի դատավարությունը, Օսմանյան կայսրության խորտակումը, հայերի նկատմամբ վերաբերմունքի անփոփոխ մնալը: Գրքի ընդարձակ բաժիններից մեկը վերնագրված է՝ «Ընդդեմ պատմության թուրքական կեղծարարության»:

Դրանում արդարացի ու համոզիչ պատասխան է տրվում հայ ժողովրդի պատմության թուրք կեղծարարներին:

Հայ դատը և Հայոց պատմության հարցերը նենգափոխող հեղինակների մերկացմանն են ուղղված նաև Հայաստանի, արտասահմանի ամսագրերում և մամուլի մյուս օրգաններում հեղինակի հրատարակած բազմաթիվ հոդվածները:

Ջ. Կիրակոսյանը գիտական իր հետաքրքրությունների առանցք կազմող հիմնահարցի ուսումնասիրությունն ամբողջացնում է այդ թեմատիկային անդրադարձած անվանի հայ գիտնականներին նվիրված աշխատություններում: Միաժամանակ ընթերցողին ծանոթացնում է այդ նշանավոր դեմքերի գործունեությանը: Նա անդրադարձել է ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի Հայկական հարցի մասին կատարած դիտարկումներին (“Предисловие / Из истории армянского вопроса. Никогайос Адонц. К разрешению армянского вопроса. Центр научной информации по общественным наукам АН АрмССР. Серия “Арменоведение за рубежом” 1984, № 7”)*: Առավել հանգամանալի լուսաբանել է պատմաբան, հրապարակախոս, արվեստաբան Ալեքսեյ Ջիվիլեգովի գործունեությունը: 1986-ին ռուսերեն լույս տեսավ «Ա. Կ. Ջիվելեգովը և նրա պատմահրապարակախոսական ժառանգությունը» աշխատանքը, որը նոր նյութերով հարստացած ու լրամշակված հրատարակվեց 2008 թ.:*

Հանրագիտարանային իմացությունների տեր գործիչը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մոսկվայում իր մասնակցությամբ հրատարակվող «Արմյանսկի վեստնիկ» ամսագրում տպագրում էր կրակոտ հոդվածներ Արևմտյան Հայաստանում ծավալվող իրադարձությունների, Հայկական հարցի, եվրոպական պետությունների գրաված դիրքի, հայ գաղթականների մասին: Ջիվիլեգովը ողջունել է «Թուրքահայաստանի մասին» Ռուսաստանի ժողկոմխորհի ընդունած 1917 թ. դեկտեմբերի 29-ի դեկրետը և նշել, որ «Ռուսաստանի օգնությունը կարող է արտահայտվել միայն այն բանում, որ Հայաստանում թողնվի ռուսական բանակի մի մասը»:

Ջ. Կիրակոսյանի կողմից Ջիվիլեգովի գործունեությանն անդրադառնալը լիովին պատճառաբանված է: Լայն գիտելիքների տեր, Մոսկվայի համալսարանի դասախոս, հայրենասեր գիտնականն ուշի ուշով հետևում էր իր ժողովրդի օրհասական մաքառումներին, արևմտահայության ողբերգությանը, նրա պայքարի հերոսական էջերին և այդ ամենը դարձնում առաջադեմ հասարակայնության սեփականությունը: Հեղինակը վերհանել է Թուրքիայի և եվրոպական պետությունների հարաբերությունների մասին նշանավոր գիտնականի այն գնահատականներն ու դատողությունները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը:

Այսպիսով, եթե իր սիրած տերմինով արտահայտվենք, Ջ. Կիրակոսյանը հայոց պատմագիտության մեջ եղավ «քաղաքական հայագիտության» վերջնական ձևավորողն ու հիմնադիրը:

Արդարամտությունը պահանջում է նշել, որ Ջ. Կիրակոսյանի աշխատություններում կան արդի պատմագիտության տեսակետից անընդունելի դրույթներ Հոկտեմբերյան հեղափոխության, որոշ այլ իրադարձությունների մասին: Սա-

կայն, նախ, նման մոտեցումներն ամենևին որակ չեն կազմում: Դրանից զատ հիշատակված մենագրությունները, դրանցում կատարված հարցադրումների ուղղվածությունն ու ոգին տարակուսանքի տեղ չեն թողնում, որ դրանք չեն եղել հեղինակի համոզմունքը: Հասկանալի է, որ առանց մարքսիստական պատմագրությանը, նրա մշակած գաղափարախոսությանը տուրք տալու խորհրդային իշխանության տարիներին այդ մենագրությունները չէին կարող լույս աշխարհ գալ:

Քաղաքացիական պարտքի բարձր գիտակցությամբ, հայրենասիրական մեծ շնչով գրված, ազգային նիհիլիզմը մերժող Ջ. Կիրակոսյանի աշխատություններն արթնացնում էին հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, նպաստում նրա ինքնաճանաչմանը, ինքնությանը: Դրանք ոչ միայն լավ ընդունվեցին համայն հայության կողմից, այլև հասարակական լայն շարժում առաջացրին: Սփյուռքի հայությունը, հալածանքի ենթարկված ու հայրենիքից արտաքսված հայերն ու նրանց ժառանգները հայոց ազգային շահերի մասին ամբողջ ճշմարտությունը վեր հանող լիարժեք խոսք չէին լսել խորհրդային հայրենիքից: Հայ ժողովրդի արդար դատը պաշտպանող Կիրակոսյանի գրքերը, քիչ է ասել աշխուժություն առաջացրին, ուղղակի փոթորկեցին սփյուռքահայ հասարակական կյանքը:

Հայրենանվեր գիտնական, քաղաքացի Ջոն Սահակի Կիրակոսյանը մեզանից հեռացավ անժամանակ, Հայաստանի անկախության նախօրյակին՝ 1985 թ.: Յավոք, նա չտեսավ իր դավանած գաղափարների պայծառ դրսևորումը՝ մեր ժողովրդի ազատագրական պայքարի հուժկու պոռթկումը: Սակայն իր ստեղծագործությունները հայրենասիրական ոգի ու շունչ հաղորդեցին այն երիտասարդությանը, որոնք աննկարագրելի դժվարին պայմաններում կարողացան հաղթանակով պսակել Արցախի ազատագրումը:

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ